

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԽՈՍՔ

Յոթ Խոսք Խաչի Վրայից

Մաս 6

«Մրանից հետո Հիսուսն իմանալով, որ ամեն քան արդեն լրացած է որպեսզի գրվածը կատարվի՝ ասեց. Ծարավ եմ: Եվ մի աման կար քացախով լիքն. և նրանք մի սպունգ լցրին քացախով և զույսի մշտիկի վրա դրած նրա բերանին մոտեցրին: Եվ երբոր Հիսուսը քացախն առավ՝ ասեց. Կատարված է. և գլուխը խոնարհեցրեց՝ հոգին ավանդեց:» Հովհաննես 19:28-30

«Հիսուսն ասեց նրանց. Իմ կերակուրը նա է, որ ինձ ուղարկողի կամքն անեմ, և նրա գործը կատարեմ:» Հովհաննես 4:34

Ինչ Իրականացրեց Հիսուսը Խաչի Վրա

1- Նա կատարեց գրված խոսքը

Եվ ասեց նրանց. Այս այն բաներն են՝ որ ձեզ հետ խոսեցի, քանի որ ես ձեզ հետ էի, թե պետք է կատարվի Մովսեսի օրենքումը և մարգարեներումը և սաղմոսներումը բոլոր ինձ համար գրվածները: Այն ժամանակ նրանց միտքը բացավ, որ գրքերը իմանան: Եվ նրանց ասեց թե՝ Այսպես է գրված, և այսպես պետք էր Քրիստոսին չարչարել և երբորդ օրը մեռելների միջից հարություն առնել. Եվ նրա անունովը ապաշխարություն և մեղքերի թողություն քարոզել բոլոր ազգերի մեջ Երուսաղեմից սկսաց:» Դուկաս 24:44-47

2- Նա բավարարեց օրենքի պահանջները

«Որովհետև այն որ անկարելի էր օրենքին, որ տկար էր մարմնի պատճառովը, Աստված իր որդին ուղարկելով մեղքի մարմնի նմանությունովը և մեղքի համար՝ մեղքին դատապարտեց այն մարմնումը. Որ օրենքի արդարությունը կատարվի մեզանում, որ մարմնավորապես չենք վարվում՝ այլ հոգևորապես:» Հռով. 8:3-4

«Եվ ջնջեց այն մեզ հակառակ ձեռագիրը հրամաններովը որ մեզ հակառակ էր, և նրան վեր առավ մեջտեղիցը և խաչափայտին վրա բնեռեց.» Կողոսացի 2:14

«Վասնզի օրենքի վախճանքը Քրիստոսն է ամեն հավատացողի համար դեպի արդարություն.» Հռովմայեցի 10:4

3- Նա վճարեց իմ տուգանքը

«Որի ձեռովն ունենք փրկություն նրա արյունովը՝ մեղքերի թողությունը.» Կողոսացի 1:14

«Որովհետև սա մեկ անգամ կատարեց այդ իր անձը պատարագ մատուցանելով:» Եբրայեցի 7:27

«Բայց որ տեղ որ սրանց թողությունը կա, այնտեղ էլ մեղքի համար պատարագ պետք չի.» Եբրայեցի 10:18

4- Նա հաղթեց մեղքին ու մահին

«Որովհետև եթե մեկի մեղքովը մահը թագավորեց այն մեկի ձեռովն, էլ որքա՞ն ավելի նրանք, որ ընդունում են շնորհքի լիությունն ու արդարության պարզները կյանքով կթագավորեն՝ այն մեկ Հիսուս Քրիստոսի ձեռովը.» Հռովմայեցի 5:17

«Որովհետև այն որ մեռնում է՝ արդարացած է մեղքիցը:» Հռով. 6:10

«Արդ որովհետև մանկունքն արյունի և մարմնի մասնակից եղան, ինքն էլ շատ նման կերպով մասնակից եղավ նրանց. որ իր մահովը խափանի մահի իշխանությունն ունեցողին այսինքն սատանային, Եվ ազատի նրանց որ մահի վախովն իրանց բոլոր կյանքի մեջ ծառայության մեջ բռնված էին:» Եբրայեցի 2:14-15

«Մկրտությունովը նրա հետ թաղվեցանք մահի մեջ. որ ինչպես Քրիստոսը Հոր փառքովը մեռելների միջից հարություն առավ, այնպես մենք էլ կյանքի նորոգության մեջ ման գանք.» Հռովմայեցի 6:4

5- Նա հաղթեց սատանային

«Իշխանություններին և պետություններին մերկացնելով, հայտնապես խայտառակեց և նրանց հաղթանակեց իրանում.» Կողոսացի 2:15

«Որ փրկեց մեզ խավարի իշխանությունիցը, և փոխադրեց մեզ իր սիրելի Որդու արքայության մեջ:» Կողոսացի 1:13

Հիսուսը վերջացրեց իր գործը,

Բայց մեր գործը դեռ վերջացած չէ

«Իմ անձն էլ պատվական չեմ համարում՝ որ ուրախությամբ կատարեմ իմ ընթացքը, և այն պաշտոնը որ Տեր Հիսուսից առա, որ Աստծո շնորհած ավետարանին վկայեմ.» Գործք Առաքելոց 20:24

Հաջորդ Կիրակի:
ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ
Հովիվ Սարո Խաչիկեան